ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/54 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
13	GelDoc Go	Bio-Rad	Գել-դոկումենտավորման համակարգ՝ գել-էլեկտրաֆորեզի և վեստեռն-բլոտինգի արդյունքների մոլեկուլային օպտիկական վիզուալիզացիայի համար: Բարձր զգայունությամբ գելային և բլոտային ֆլուորեսցենտ վիզուալիզացիայի առկայություն: Երկչափ սպիտակուցային գել-էլեկտրաֆորեզի արդյունքների պատկերման հնարավորություն: Միաչափ գել-էլեկտրաֆորեզի արդյունքների պատկերում (սպիտակուցներ և նուկլեինաթթուներ): Վեստեռն-, Նորթեռն- և Սաութեռն-բլոտերի վիզուալիզացիա: Տրանսիլյումինատորի անվտանգ օգտագործում՝ ագարոզ գելից ԴՆԹ գծերի հատվածների կտրելու համար: Ֆլուորեսցենտ ներկերով գելերի և բլոտերի վիզուալիզացիա (օր.՝ Coomassie Fluor Orange, էթիդիում բրոմիդ, GelGreen, GelRed, Oriole, SYBR Gold, SYBR Green, SYBR Safe, SYPRO Ruby): Գունաչափական դետեկցիա (օր.՝ Coomassie Blue, Ponceau S, արծաթ, պղնձի և ցինկի աղեր): Գելերի և բլոտերի բծերի վիզուալիզացիա առանց ներկման՝ Stain-Free տեխնոլոգիայով: Դետեկտոր. Մատրիցայի տիպ՝ բարձր զգայունությամբ CMOS տեսախցիկ, պիքսելի չափը՝ 2.4x2.4 մկմ, նմուշի

			առավելագույն չափը՝ 21 x 14սմ, դինամիկ տիրույթ՝ 3.5 կարգ, պիքսելային խտություն՝ 65 536 մոխրագույն երանգ, տեսախցիկի թույլատրելիություն՝ 6.3 մեգապիքսել։ Գրգռման աղբյուրներ. Տրանս-ՈւՄ՝ գրգռում 300-305 նմ տիրույթում, էպի-սպիտակ լույս, տրանս-սպիտակ լույսի օգտագործման հնարավորություն, տրանս-կապույտ լույսի օգտագործման հնարավորություն, ՈւՄ պաշտպանիչ էկրանով աշխատելու հնարավորություն։ Ավտոմատացման հնարավորություններ. Հավելվածների ճանաչում կոնվերսիոն էկրանների միջոցով, արագ կամ ձեռքով սահմանվող էքսպոզիցիա՝ ավտոմատ ռեժիմով, հարթ պատկերի դինամիկ դաշտ՝ նախնական կալիբրացիայով յուրաքանչյուր օգտագործման համար։ Ներկառուցված կառավարման համակարգ. Կառավարում՝ ներկառուցված ծրագրով և հպումային էկրանով, էկրանի անկյունագծային չափը՝ 9.7 դյույմ, էկրանի թույլատրելիություն՝ 1024x768 պիքսել, միաժամանակյա միացման հնարավորություն՝ ստեղնաշար, մկնիկ և USB կրիչ, Օպերատիվ հիշողություն՝ 2 Գբ, ներքին պահեստային հիշողություն՝ 32 Գբ, USB պորտերի քանակը՝ 4 հատ, Ethernet պորտ՝ 1 հատ, տվյալների արտահանման ձևաչափեր՝ խմբագրվող արձանագրություններ, SCN, JPEG, TIFF պատկերներ, 16- և 8-բիթանոց, տվյալների արտահանում USB կրիչով, օգտատերերի համար առանձին հաշիվների ստեղծման և կառավարման հնարավորություն՝ պաշտպանված մուտքով, ՈւՄ լամպերի ավտոմատ անջատում դռան բացման ժամանակ, IQ/OQ որակավորման հնարավորություններ։ Սարքի արտաքին չափսերը (Խ×L×Բ)՝ 44.8×36×35.3 սմ, սարքի քաշ՝ 16 կգ։ Տրանսիլյումինատորի մակերես՝ 14x21 սմ։ Համալրված կոնվերսիոն էկրան՝ քեմիլյումինեսցենցիայի, ՈւՄ և Stain-Free տեխնոլոգիայի համար։ Կապույտ կոնվերսիոն էկրան՝ SYBR ներկով գելերի անվտանգ կտրելու և դիտարկման համար։ Սպիտակ կոնվերսիոն էկրան՝ գունաչափական ներկում ունեցող գելերի և բլոտերի համար։ Օգտատերերի կառավարման հնարավորության ակտիվացում ծրագրում։ Windows և Mac OS համակարգերի համատեղելիություն։ Տեղադրման

			անսահմանափակություն՝ առանց հավելյալ վճարի: Մոլեկուլային զանգվածների քանակական վերլուծություն՝ ավտոմատ և ձեռքով: Արդյունքների արխիվացում, պատկերների արտահանում .JPG, .TIF, .BMP, .PNG ձևաչափերով: Օգտագործողի արձանագրությունների պահպանում: Գծերի և բծերի ավտոմատ և ձեռքով որոշում: Ընդհանուր սպիտակուցով նորմալացում՝ առանց ներկման տեխնոլոգիայով: Վեստեռն բլոտի նորմալացում՝ հաուսքիպինգ սպիտակուցներով: ԴՆԹ և սպիտակուցային բծերի հարաբերական և բացարձակ քանակական վերլուծություն: Երեք շերտով համակցված պատկերների ստեղծման հնարավորություն: Գելերի և բլոտերի եռաչափ վիզուալիզացիա: In Cell Western տեխնոլոգիայի արդյունքների վերլուծություն՝ 6, 12, 24, 48, 96 և 384-փոսանոց պլաստինների համար (3 ալիքով): Սարքը նոր է և չօգտագործված: Սարքի հետ տրամադրվում են բոլոր անհրաժեշտ պարագաները լիարժեք աշխատանքի համար: Սարքի տեղադրումը, գործարկումը և անձնակազմի ուսուցումը իրականացվում է մատակարարի կողմից: Երաշխիքային ժամկետ՝ 2 տարի: Արտադրողը ունի որակի հավաստագիր՝ ISO 13485:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЗЦЧ-ЕЦЖЦПЗДР-26/54 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
13			